ՎԱՐԿ ՀՄ. 8786-ԱՄ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Ռոգման համակարգերի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջև

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ («Վարկառու») և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ («Բանկ») միջև Ստորագրման ամսաթվով թվագրված համաձայնագիր՝ Սկզբնական Ծրագրին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու նպատակով (ինչպես սահմանվում է սույն Համաձայնագրին կից Հավելվածում): Վարկառուն և Բանկը սույնով համաձայնում են հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանվում են սույն Համաձայնագրի Հավելվածում) սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են:

1.02. Եթե համատեքստն այլ բան չի պահանջում, սույն Համաձայնագրում մեծատառով օգտագործված հասկացությունները կրում են Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի Հավելվածում իրենց վերագրված իմաստները:

ՀՈԴՎԱԾ II. Վարկ

2.01. Բանկը համաձայն է Վարկառուին տրամադրել երկու միլիոն ԱՄՆ դոլար գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով («Վարկ»)՝ սույն Համաձայնագրի 1-ին Առդիրում նկարագրված ծրագրի («Ծրագիր») ֆինանսավորմանն աջակցելու համար:

2.02. Վարկառուն կարող է առհանել Վարկի միջոցները՝ սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի III բաժնին համապատասխան:

2.03. Սկզբնավճարը հավասար է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%):

2.04. Պարտավճարը հավասար է Վարկի Չառհանված մնացորդի տարեկան մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%):

2.05. Տոկոսագումարը Ուղղորդիչ դրույքաչափի և Փոփոխական սպրեդի գումարն է կամ այն տոկոսագումարը, որը կարող է կիրառվել փոխարկումից հետո՝ համաձայն Ընդհանուր պայմանների 3.02 (ե) Բաժնի դրույթների:

2.06. Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ը և նոյեմբերի 15-ը:

2.07. Վարկի մայր գումարը վերադարձվում է սույն Համաձայնագրի 3-րդ Առդիրի համաձայն:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն հայտարարում է Ծրագրի նպատակների իրականացման հանձնառության մասին: Այս նպատակով Վարկառուն պետք է Ծրագիրն իրականացնի Ընդհանուր պայմանների V հոդվածի և սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ IV. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

4.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանը ներառում է հետևյալը, մասնավորապես, որ Գործառնական ձեռնարկը պետք է փոփոխված և ընդունված լինի Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ:

4.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվին հաջորդող հարյուրութսուներրորդ (180) օրն է:

ՀՈԴՎԱԾ V. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՀԱՍՑԵՆԵՐ

5.01. Վարկառուի ներկայացուցիչը նրա ֆինանսների նախարարն է.

5.02. Ընդհանուր պայմանների 10.01-ին բաժնի նպատակներով՝

ա) Վարկառուի հասցեն է.

Ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան 1
Երևան, 0010
Հայաստանի Հանրապետություն

բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝

Ֆաքս՝
374 11 800132

5.03. Ընդհանուր պայմանների 10.01-ին բաժնի նպատակներով՝

ա) Բանկի հասցեն է.

Վերակառուցման և զարգացման
միջազգային բանկ
1818 Հ. փողոց, N.W.
Վաշինգտոն Դ.Ս. 20433
Ամերիկայի Միացյալ Նահանգներ

բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է.

Տելեքս՝ Ֆաքս՝

248423(MCI) or 1-202-477-6391
64145(MCI)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է ստորագրման ամսաթվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

ստորագրություն
Լիազոր ներկայացուցիչ
Անուն՝ Վարդան Արամյան

Պաշտոն՝ ֆինանսների նախարար

Ամսաթիվ՝ 2017 թվականի նոյեմբերի 20

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ
ստորագրություն
Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Սիլվի Բոսուտղո

Պաշտոն՝ Երկրի կառավարիչ
Ամսաթիվ՝ 2017 թվականի նոյեմբերի 20

ԱՌԴԻՐ 1

Ծրագրի նկարագրություն

Ծրագրի նպատակներն են՝ i) կրճատել սպառվող էլեկտրաէներգիայի ծավալը և բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունը ոռոգման թիրախային համակարգերում և ii) բարելավել ոլորտային կարևոր տվյալների և տեղեկատվության մատչելիությունը և հուսալիությունը որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս Ա. Ոռոգման համակարգի բարելավում

1. ա) Մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս համակարգով՝ *Գեղարդալիճ, Մեղրի, Բաղրամյան-Նորակերտ և Քաղցրաշեն* ինքնահոս համակարգերի կառուցման միջոցով, և
   բ) ներտնտեսային ջրանցքի համակարգի կառուցում Բաղրամյան-Նորակերտ ինքնահոս համակարգի համար:

2. Մեխանիկական եղանակով ստացվող՝ ջուր տեղափոխող՝ հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում՝ ընտրված տասներեք (13) պոմպակայանների շուրջ 52 կմ երկարությամբ՝ հեռացնող ջրանցքների վերականգնման միջոցով:

Մաս Բ. Կառավարման վերաբերյալ տեղեկատվություն

1. Տեխնիկական ուսումնասիրությունների իրականացում հետևյալ նպատակներով՝ ա) վերլուծել ոռոգում իրականացնող կազմակերպությունների շահագործման, սպասարկման և արտապլանային սպասարկման կարիքները, և բ) ջրամատակարար կազմակերպությունների և ՁՕԸ-ների տեխնիկական աուդիտ իրականացնելու նպատակով:

2. Կարգավարական հսկողության և տվյալների ձեռքբերման (SCADA) համակարգի տեղադրում մայր ջրանցքների վրա գտնվող շուրջ յոթանասուն (70) դիտակետերում և ջրառի ընտրված կետերում:

Մաս Գ. Ծրագրի կառավարում և ՁՕԸ-ներին աջակցություն

1. ԾԻԳ-ին աջակցության տրամադրում Ծրագրի կառավարման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման աշխատանքներում՝ ապրանքների,

խորհրդատվական ծառայությունների, այդ թվում՝ աուդիտի և Գործառնական ծախսերի ապահովման միջոցով:

2. ՁՕԸ-ների ղեկավարությանը, անձնակազմին և անդամներին աջակցության տրամադրում՝ նրանց տեխնիկական, գործառնական, ֆինանսական և կազմակերպչական կարողությունների և աշխատանքի բարելավման նպատակով՝ խորհրդատվական ծառայությունների և վերապատրաստման միջոցով:

ԱՌԴԻՐ 2

Ծրագրի իրականացում

Բաժին I. Իրականացման մեխանիզմներ

Ա. Ինստիտուցիոնալ մեխանիզմներ

1. Վարկառուն ՁՏՊԿ միջոցով պետք է նշանակի ԾԻԳ-ին, որը կստանձնի գնումների պլանավորման, մշտադիտարկման և հաշվետվությունների ներկայացման, ֆինանսական կառավարման և վճարումների, Ծրագրի հաշիվների վարման և Ծրագրի հաշվետվությունների կազմման պարտավորություններ, և կապահովվի, որ ԾԻԳ-ը միշտ ունենա համապատասխան աշխատակազմ և ռեսուրսներ՝ Ծրագրի իրականացման և կառավարման հետ կապված իր պարտականությունները կատարելու համար:

2. Վարկառուն պետք է ապահովի, որ ԾԻԳ-ը Ծրագիրն իրականացնի Գործառնական ձեռնարկի համաձայն և, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի հետ ձեռք կբերվի այլ համաձայնություն, չպետք է փոխի կամ հրաժարվի Գործառնական ձեռնարկի որևէ դրույթից, եթե, Բանկի կարծիքով, նման փոփոխությունը կամ հրաժարումը կարող է էականորեն և բացասաբար ազդել Ծրագրի իրականացման կամ Ծրագրի նպատակին հասնելու վրա:

3. Վարկառուն պետք է պահպանի ՁՕԸ-ին աջակցող խումբը ԾԻԳ-ի կազմում մինչև Ծրագրի ավարտը, ինչը կօժանդակի Ծրագրի Գ.2 մասի իրականացմանը:

4. Վարկառուն պետք է ապահովի, որ Վարկառուի տարեկան բյուջեում ոռոգման համակարգերի պահպանման համար ոռոգման ոլորտին հատկացվեն անհրաժեշտ բյուջետային միջոցներ:

Բ. Երաշխիքներ

1. Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ համաձայնություն կտա, Վարկառուն ՁՏՊԿ միջոցով պետք է՝ ա) Ծրագրի Ա մասի շրջանակում իրականացվող աշխատանքների համար կիրառի ՇՄԿՇ-ում, ԲԿՊ-ներում, ՇՄԱԳ-ներում, ՎՔՇ-ում և ՎԳՊ-ներում սահմանված չափանիշները, քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները՝ ըստ անհրաժեշտության, և բ) չփոփոխի կամ չհրաժարվի կամ թույլ չտա փոփոխել կամ հրաժարվել ՇՄԿՇ-ից, ԲԿՊ-ներից, ՇՄԱԳ-ից, ՎՔՇ-ից և ՎԳՊ-ներից կամ դրանց որևէ դրույթից այնպիսի ձևով, որը, Բանկի կարծիքով, կարող է էականորեն կամ բացասաբար ազդել Ծրագրի իրականացման վրա:

2. Վարկառուն ՁՏՊԿ միջոցով պետք է՝

ա) ապահովի, որ. i) Ծրագրի Ա մասի շրջանակում ընտրված՝ ոռոգման որոշակի համակարգի կամ համակարգի առանձին հատվածի շինարարական աշխատանքներ չսկսվեն մինչև տվյալ համակարգի կամ ընտրված հատվածի համար Վարկառուի կողմից մշակվի ու տեղում և ՁՏՊԿ կայքում հրապարակվի Բանկի համար ընդունելի ԲԿՊ, և ii) կազմակերպի նշված ԲԿՊ հրապարակային ուսումնասիրությունն և կարծիքի տրամադրումը, ստացված կարծիքներին Բանկի համար ընդունելի ձևով պատասխանի տրամադրումը և ԲԿՊ վերջնական հաստատված տարբերակի տեղական մասշտաբով հրապարակումը, և iii) համապատասխան ԲԿՊ որևէ դրույթ չփոխանցվի, չփոփոխվի, չեղյալ չհայտարարվի կամ չհանվի՝ առանց Բանկի նախնական դիտարկման կամ հաստատման.

բ) ապահովի, որ Ծրագրի Ա մասի իրականացման նպատակով ձեռնարկված բոլոր միջոցառումները համապատասխանեն բնապահպանական նորմերին և Բանկի համար ընդունելի ուղեցույցներին.

գ) ապահովի, որ Ծրագրի Ա մասի շրջանակում ոռոգման համակարգի կամ այդ համակարգի հատվածի ընտրությունը կատարվի համապատասխան ԲԿՊ դրույթների համաձայն.

դ) ապահովի ԲԿՊ-ների լիարժեք իրականացումը՝ Բանկի համար ընդունելի ձևով, այդ թվում՝ Ծրագրի Ա մասի իրականացման արդյունքում առաջացած՝ ցանկացած բացասական բնապահպանական ազդեցություն նվազագույնի հասցնելու և մեղմելու համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները, և

ե) պահպանի ՁՏՊԿ–ն և ապահովի, որ նա նշանակի բավարար թվով արհեստավարժ աշխատակիցների՝ Բանկի համար ընդունելի պարտականություններով և գործառույթներով, ինչը ՁՏՊԿ–ին կտա ԲԿՊ-ների իրականացումը կառավարելու, համակարգելու և հսկելու հնարավորություն:

3. Ոռոգման որոշակի համակարգի կամ համակարգի հատվածի շրջակայքում հողի ձեռքբերման անհրաժեշտություն առաջանալու դեպքում Վարկառուն ՁՏՊԿ միջոցով պետք է.

ա) կազմի և հրապարակի Բանկի համար ընդունելի ՎԳՊ՝ ոռոգման համապատասխան համակարգի և համակարգի հատվածի վրա շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեսուն (30) օր առաջ,

բ) պահպանի կամ կազմակերպի պահպանումը և հրապարակի կամ կազմակերպի բողոքների ուսումնասիրման ընթացակարգերի հրապարակումը՝ այն է ՎԳՊ-ների իրականացման հետ կապված այն անձանց կողմից ներկայացված բոլոր բողոքների վերաբերյալ, ովքեր ենթարկվել են բացասական ազդեցության և/կամ տեղահանվել են,

(համաձայն ՎԳՊ-ում տվյալ տերմինի սահմանման), կամ այն համայնքների կողմից, որոնք ՎՔՇ-ի իրականացման արդյունքում ենթարկվել են բացասական ազդեցության՝ կախված դեպքից և ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցներն այդ բողոքների լուծման ընթացակարգերով ընդունած որոշումներն իրականացնելու համար, և

գ) իրականացնի բոլոր մյուս գործողությունները, որոնք Բանկը կհամարի անհրաժեշտ կամ ցանկալի, այդ թվում՝ առանց սահմանափակումների. i) ներգրավի Բանկի համար ընդունելի վերաբնակեցման փորձագետի՝ ՎԳՊ-ների իրականացման արդյունքների փաստացի գնահատում կատարելու համար, ii) Բանկին անմիջապես ներկայացնի նման յուրաքանչյուր ուսումնասիրության եզրակացություններն ու առաջարկությունները՝ հետագա ընթացքին հետևելու քայլերի վերաբերյալ, և iii) իրականացնի հետագա գործողությունների վերաբերյալ Բանկի հետ համաձայնեցված բոլոր առաջարկությունները:

4. Վարկառուն ՁՏՊԿ-ի միջոցով պետք է՝

ա) շարունակի իրականացնել Բանկի համար ընդունելի՝ Պատվարների անվտանգության պլանը: Վարկառուն չպետք է փոփոխի, վերանայի կամ չեղյալ հայտարարի Պատվարների անվտանգության պլանը՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության.

բ) Ծրագրի իրականացման ողջ ընթացքում շարունակի պահպանել Պատվարների անվտանգության հանձնաժողով՝ բաղկացած բնապահպաններից և սոցիալական ոլորտի փորձագետներից, Բանկի համար ընդունելի պայմաններով (տեխնիկական առաջադրանքով), կազմով և միջոցներով՝ պատվարների նախագծման, շինարարության և շահագործման անվտանգության և այլ կարևոր ասպեկտները վերանայելու և դրանց վերաբերյալ Վարկառուին խորհուրդ տալու նպատակով, և

գ) Այնուհետև Վարկառուն պետք է ապահովի, որ վերոնշյալ «ա» կետում նկարագրված փորձագետների հանձնաժողովի առաջարկությունները պատշաճ կերպով հաշվի առնվեն և իրականացվեն Բանկի համար ընդունելի եղանակով, և

նշված նպատակի համար Վարկառուն պետք է կատարի կամ ապահովի բոլոր այն գործողությունների իրականացումը, որոնք անհրաժեշտ են նշված առաջարկությունները կատարելու համար:

Բաժին II. Ծրագրի մշտադիտարկում, հաշվետվությունների ներկայացում և գնահատում

Վարկառուն պետք է Ծրագրի մասին յուրաքանչյուր հաշվետվություն ներկայացնի Բանկին ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում, և պետք է ընդգրկի մեկ օրացուցային կիսամյակ ժամանակահատված:

Բաժին III. Վարկային միջոցների մատչանում

1. Վարկառուն կարող է, առանց սահմանափակումների, վարկային միջոցները մատչանել Ընդհանուր պայմանների II հոդվածի և Մատչանումների և ֆինանսական տեղեկատվական նամակի համաձայն՝ ա) ֆինանսավորելու համար թույլատրելի ծախսերը և բ) վճարելու համար սկզբնավճարը հատկացված գումարով և, եթե կիրառելի է, հետևյալ աղյուսակում նշված յուրաքանչյուր Կատեգորիայի համար սահմանված տոկոսի չափով:

Կատեգորիա	Հատկացված վարկի գումարը (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (ներառյալ հարկերը)
1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, Ուսուցում և Գործառնական ծախսեր Ծրագրի համար:	1,995,000	80%
2) Սկզբնավճար	5,000	Վճարման ենթակա գումար՝ ըստ սույն Համաձայնագրի 2.03-րդ բաժնի Ընդհանուր պայմանների 2.07 (բ) բաժնի համաձայն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ	2,000,000	

2. Չնայած վերը նշված 1-ին կետի դրույթներին՝ որևէ մատչանում չպետք է կատարվի Ստորագրման ամսաթվից առաջ կատարված վճարումների համար:
3. Փակման ամսաթիվը 2019 թ. հունիսի 30-ն է:

ԱՌԴԻՐ 3

Հետևյալ աղյուսակում սահմանվում են Վարկի Մայր գումարի վճարման ամսաթվերը և Վարկի Մայր գումարի Վճարման յուրաքանչյուր ամսաթվին վճարման ենթակա Վարկի ընդհանուր Մայր գումարի տոկոսը («Մասնավճար»):

Մայր գումարի վճարման ամսաթիվ	Մասնավճար
Յուրաքանչյուր մայիսի 15 և նոյեմբերի 15 Սկսած 2032 թ. մայիսի 15-ից մինչև 2042 թ. մայիսի 15-ը	4.55%
2042 թ. նոյեմբերի 15	4.45%

ՀԱՎԵԼՎԱԾ

Սահմանումներ

1. «Հակակոռուպցիոն ուղեցույց» նշանակում է, Ընդհանուր պայմանների Հավելվածի 5-րդ կետի նպատակներով, 2006 թ. հոկտեմբերի 15-ով թվագրված և 2011 թ. հունվարին և 2016 թ. հուլիսի 1-ի դրությամբ փոփոխված՝ «ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ Վարկերի և դրամաշնորհների շրջանակներում ֆինանսավորվող ծրագրերում խարդախության և կոռուպցիայի կանխարգելման և դրանց դեմ պայքարի ուղեցույցներ»:

2. «Պատվարների անվտանգության հանձնաժողով» նշանակում է՝ Վարկառուի կողմից ստեղծված խումբ՝ Բանկի համար ընդունելի կազմով և պայմաններով (տեխնիկական առաջադրանքով), բաղկացած ազգային և միջազգային փորձագետներից, որոնք պետք է ստուգեն նախագծերը և վերահսկեն անվտանգության միջոցառումների իրականացումը Ծրագրի մաս Ա.1 (ա)-ի շրջանակներում *Գեղարդալիճ* պատվարի վերակառուցման համար:

3. «Պատվարների անվտանգության պլան» նշանակում է՝ Վարկառուի կողմից 2003 թ. փետրվարի 12-ին հաստատված և սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի բաժին Ի.Բ.4 (ա) կետում նշված պլան:

4. «ՇՄԱԳ» նշանակում է՝ Բանկի համար ընդունելի՝ Ծրագրի բաժին Ա.1 (ա)-ի շրջանակներում պատրաստված՝ Վարկառուի՝ Շրջակա միջավարի ազդեցության գնահատման զեկույցներ՝ *Մեղրի* (թվագրված՝ ապրիլ, 2015 թ.), *Բաղրամյան-Նորակերտ* (թվագրված՝ սեպտեմբեր, 2016 թ.), *Քաղցրաշեն* (թվագրված՝ մարտ, 2017 թ.) և *Գեղարդալիճ* (թվագրված՝ ապրիլ, 2017 թ.), համակարգերի համար, որոնք պարունակում են հետևյալը.

   i) Ծրագրի շրջանակում իրականացվելիք շինարարական աշխատանքների հրապարակի նկարագրություն և նշված աշխատանքների հիմնավորում, ii) վերը նշված i ենթակետում հիշատակված շինարարական աշխատանքների հնարավոր ազդեցություն շրջակա միջավայրի վրա և iii) բնապահպանական կառավարման պլան, որը սահմանում

է այն մեղմացման միջոցները և համակարգերը, որոնք անհրաժեշտ են վերոնշյալ i) ենթակետում հիշատակված շինարարական աշխատանքների մշտադիտարկման և նշված միջոցառումներին աշխատանքների համապատասխանությունն ապահովելու համար՝ երաշխավորելու համար այս աշխատանքների համապատասխանությունը նշված միջոցառումներին, ունենալով շրջակա միջավայրի վրա փաստացի և հնարավոր բացասական ազդեցությունը սահմանափակելու նպատակ:

5. «ՇՄԿՇ» նշանակում է՝ Վարկառուի՝ 2013 թ. մարտի 29-ով թվագրված՝ Բանկի համար ընդունելի՝ Շրջակա միջավայրի կառավարման շրջանակ և, ըստ 2017 թ. հունվարի փոփոխության, ուրվագծում է ընթացակարգեր հետևյալի համար. ա) ծրագրի անհատական ներդրումների ուսումնասիրություն՝ շրջակա և սոցիալական միջավայրի վրա դրանց ակնկալվող ազդեցության տեսանկյունից, բ) դրանց ռիսկերի գնահատում, գ) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման անհրաժեշտության որոշում՝ որպես ԲԿՊ-ների պատրաստման ընթացակարգի բաղկացուցիչ մաս և, անհրաժեշտության դեպքում, շրջակա միաջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակ, դ) հրապարակում և ե) ԲԿՊ-ի իրականացման մշտադիտարկում:

6. «ԲԿՊ» նշանակում է՝ Բանկի համար ընդունելի անհատական օբյեկտների համար պատրաստված բնապահպանական կառավարման պլաններ, որոնք պետք է պատրաստվեն ՇՄԿՇ հիման վրա, Ծրագրի իրականացման ընթացքում՝ նախքան Ծրագրի որևէ շինարարական աշխատանք սկսելը, որոնք նկարագրում են Ծրագրի իրականացման ընթացքում կատարման ենթակա և Բանկի համար ընդունելի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմման, մշտադիտարկման և ինստիտուցիոնալ միջոցառումներ:

7. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է՝ 2017 թ. հուլիսի 14-ով թվագրված՝ «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի Վարկային Ընդհանուր պայմանները ՎԶՄԲ ֆինանսավորման, ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար»:

8. «ԷԵԲՊՆ» նշանակում է՝ Վարկառուի էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն կամ նրա ցանկացած իրավահաջորդ կամ իրավահաջորդներ:

9. «Գործառնական ծախսեր» նշանակում է՝ ԾԻԳ-ի և տեղանքներ վերահսկողների կողմից կատարվող գործառնական ծախսեր, Ծրագրի իրականացման, կառավարման ու մշտադիտարկման համար, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների շահագործումն ու պահպանումը, սոցիալական վճարները, գրասենյակի սարքավորումների շահագործումն ու սպասարկումը, հեռահաղորդակցման ծախսերը, տեղեկատվական համակարգերի օժանդակությունը, թարգմանության ծախսերը, բանկային վճարները, ճամփորդության և օրապահիկ ծախսերը և Ծրագրի միջոցառումների իրականացման հետ ուղղակիորեն կապված այլ խելամիտ ծախսերը՝ բոլորն էլ հիմնված Բանկի համար ընդունելի տարեկան բյուջեի վրա:

10. «Գործառնական ձեռնարկ» նշանակում է՝ Վարկառուի ձեռնարկ, որը նկարագրում է Ծրագրի իրականացման ընթացակարգերը՝ սույն Համաձայնագրի դրույթներին և Վարկառուի ազգային օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, այդ թվում՝ այն ընթացակարգերը, որոնցով վերահսկվում են Ծրագրի վարչական, գնումների, հաշվապահական հաշվառման, ֆինանսական կառավարման, մշտադիտարկման և գնահատման միջոցառումները, որոնք Բանկի համաձայնությամբ կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել (այդ թվում, ինչպես պահանջվում է, սույն Համաձայնագրի բաժին 4.01-ի համաձայն):

11. «Վարկային սկզբնական համաձայնագիր» նշանակում է՝ Վարկառուի և Բանկի միջև «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի» համաձայնագիր՝ թվագրված 2013 թվականի մայիսի 29-ով, մինչև սույն Համաձայնագրի ամսաթիվը կատարված փոփոխություններով (Վարկ հմ. 8267-AM):

12. «Սկզբնական ծրագիր» նշանակում է՝ Վարկի սկզբնական համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված ծրագիր:

13. «Վնասատուների կառավարման պլան» նշանակում է՝ Ծրագրի իրականացման ընթացքում օգտագործվող քիմիական նյութեր՝ Ծրագրի շահառուների կողմից անվտանգ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու և վնասատուների ինտեգրված կառավարման մասին իրազեկման բարձրացմանն ուղղված պլան, որը պետք է ներառվի ԲԿՊ- ներում:

14. «ԾԻԳ» նշանակում է՝ Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ, որը գործում է Վարկառուի էԵԲՊՆ-ի ՁՏՊԿ-ի կազմում:

15. «Գնումների կանոնակարգեր» նշանակում է, Ընդհանուր պայմանների Հավելվածի 85-րդ կետի նպատակներով, «Համաշխարհային բանկի գնումների կանոնակարգերը վարկառուների համար՝ ներդրումային ծրագրերի ֆինանսավորման շրջանակում»՝ թվագրված 2016 թ. հուլիսի 1-ով:

16. «ՎԳՊ/ներ» նշանակում է՝ վերաբնակեցման գործողությունների պլան/պլաններ, որը/որոնք, սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի Բ.3 (ա) բաժնի համաձայն, կազմվելու և հաստատվելու են Վարկառուի կողմից՝ որպես Ծրագրի շրջանակում ջրանցքի ընտրված հատվածի/հատվածների ՎՔՇ իրականացման առաջարկություն:

17. «ՎՔՇ» նշանակում է՝ Վարկառուի կողմից կազմված, 2013 թ. մարտի 29-ին հաստատված և 2017 թվականի հունվարին փոփոխված՝ վերաբնակեցման քաղաքականության շրջանակ, որը կսահմանի հողի ձեռքբերման, Ծրագրի «Ա» մասի շրջանակներում տեղահանված անձանց վերաբնակեցման և վերականգնման ձևերը:

18. «ՁՏՊԿ» նշանակում է՝ Վարկառուի էԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտե, որը պատասխանատու կլինի Ծրագրի ամբողջական իրականացման համար:

19. «Ստորագրման ամսաթիվ» նշանակում է՝ երկու ամսաթվերից վերջինը, երբ Վարկառուն և Բանկը ստորագրեն սույն Համաձայնագիրը և այդ սահմանումը կիրառվում է Ընդհանուր պայմանների բոլոր՝ «Վարկային Համաձայնագրի ամսաթիվ» հղումների դեպքում:

20. «Ուսուցում» նշանակում է՝ Ծրագրի հաշվին կատարված ուսումնական ուղևորությունների, ուսուցման դասընթացների, սեմինարների, աշխատաժողովների և այլ ուսումնական միջոցառումների համար կատարված ծախսեր՝ դասընթացների մասնակիցների և դասընթացավարների ճանապարհածախսն ու օրապահիկները ներառյալ:

21. «Ջրառ կատարող կազմակերպություններ» նշանակում է՝ Վարկառուի Կառավարության հմ. 1301 որոշմամբ՝ թվագրված դեկտեմբերի 29, 2001 թ., ստեղծված պետական փակ բաժնետիրական ընկերություն կամ դրա օրինական իրավահաջորդներ, որոնք

պատասխանատու են ոռոգման համակարգի առաջնային մակարդակի պահպանման և շահագործման համար:

22. «ՁՕԸ» նշանակում է՝ Ձրօգտագործողների ընկերություն, որը սահմանված է Վարկառուի «Ձրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների ֆեդերացիաների մասին» Օրենքում, որն ուժի մեջ է մտել, 2002 թվականի հոկտեմբերի 10-ին:

23. «ՁՕԸ-ներին աջակցող խումբ» նշանակում է՝ ԾԻԳ-ի՝ Ծրագրի Գ.2 մասի իրականացման համար պատասխանատու անձնակազմ: